# Գորիսի Պետական համալսարան ՊՈԱԿ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2023 թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


| | |
|---|---|
| Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն | 3 |
| Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն | 4 |
| Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն | 5 |
| Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն | 6 |
| Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ | 7-14 |

«Գորիսի պետական համալսարան» ՊՈԱԿ

**Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն**

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

| Հազար ՀՀ դրամ | Ծանոթա-գրություն | 2023 31դեկտեմբեր | 2022 31 դեկտեմբեր |
|---|---|---|---|
| **ԱԿՏԻՎՆԵՐ** | | | |
| ***Ոչ ընթացիկ ակտիվներ*** | | | |
| Հիմնական միջոցներ | 4 | 221122.8 | 213911.5 |
| Ոչ նյութական ակտիվներ | 5 | 4092.3 | 4766.9 |
| Ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ | | 0.0 | 0.0 |
| Այլ ոչ ընթացիկ ակտիվներ | | 0.0 | 0.0 |
| **Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ** | | 225215.1 | **218678.4** |
| ***Ընթացիկ ակտիվներ*** | | | |
| Պաշարներ | 6 | 15379.9 | 17774.1 |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր | 7 | 72178.6 | 124595.5 |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 8 | 112522.7 | 77549.5 |
| **Ընդամենը ընթացիկ ակտիվներ** | | 200081.2 | **219919.1** |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ** | | **425296.3** | 438597.5 |
| **ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | | |
| ***Սեփական կապիտալ*** | | | |
| Պահուստային կապիտալ | | | |
| Սեփական կապիտալի այլ տարրեր | | 149475.9 | 185928.6 |
| Վերագնահատումից պահուստ | | 174337.7 | 174337.7 |
| **Ընդամենը սեփական կապիտալ** | | **323813.6** | **360266.3** |
| **Ոչ ընթացիկ պարտավորություններ** | | | |
| Հետաձգված հարկային պարտավորություններ | | | |
| Ակտիվներից վերաբերող շնորհներ | 9 | 46662.0 | 27662.5 |
| **Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ** | | **46662.0** | **27662.5** |
| **Ընթացիկ պարտավորություններ** | | | |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | 10 | 30454.9 | 26925.0 |
| Եկամուտներից վերաբերող շնորհներ | 9 | 24365.8 | 23743.7 |
| Ընթացիկ պահուստներ | | | |
| **Ընդամենը ընթացիկ պարտավորություններ** | | **54820.7** | **50668.7** |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ** | | 425296.3 | 438597.5 |

Ռեկտոր

Գլխավոր հաշվապահ

« Գորիսի պետական համալսարան » ՊՈԱԿ

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

| Հազար ՀՀ դրամ | Ծանոթա-գրություն | 2023 | 2022 |
|---|---|---|---|
| Ծառայությունների,աշխատանքների կատարումից հասույթ | | 279849.4 | 289648.7 |
| Ծառայությունների,աշխատանքների ինքնարժեք | | (172686.4) | (196341.6) |
| **Համախառն շահույթ (վնաս)** | | **107163.0** | **93307.1** |
| Իրացման ծախսեր | | (96.9) | (96.9) |
| Վարչական ծախսեր | | (96340.4) | (77274.6) |
| Գործառնական այլ եկամուտներ | | 72.9 | 96.7 |
| Գործառնական այլ ծախսեր | | (41345.0) | (109) |
| **Գործառնական շահույթ** | | **(30546.4)** | **15923.3** |
| Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս) | | (5863.0) | **(8787.2)** |
| **Զուտ շահույթ (վնաս) մինչև հարկումը** | | **(36409.4)** | **7136.1** |
| Շահութահարկի գծով (ծախս) փոխհատուցում | | (43.3) | (550.0) |
| **Տարվա շահույթ** | | **(36452.7)** | **6586.1** |
| **Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ** | | | |
| **Ընդամենը տարվա համապարփակ արդյունք** | | **(36452.7)** | **6586.1** |

Ռեկտոր

Գլխավոր հաշվապահ

« Գորիսի պետական համալսարան » ՊՈԱԿ

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

| Հազար ՀՀ դրամ | Կուտակված շահույթ | Պահուստային կապիտալ | Սեփական կապիտալի այլ տարրեր | Վերագնահատման պահուստ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2022թ** | **185928.6** | | | **174337.7** | **360266.3** |
| Տարվա շահույթ. | **(36452.7)** | | | | **(36452.7)** |
| Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ | | | | | |
| **Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունքներ** | 149475.9 | | | 174337.7 | 323813.6 |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2023թ** | 149475.9 | | | 174337.7 | 323813.6 |

Ռեկտոր

Գլխավոր հաշվապահ

« Գորիսի պետական համալսարան » ՊՈԱԿ

**Դրամական հոսքերի մասին հաշվետվություն**

**2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար**

| Հազար ՀՀ դրամ | 2023 | 2022 |
|---|---|---|
| ***Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր*** | | |
| Ծառայությունների մատուցումից մուտքեր /վճարովի ուսուցում/ | 204936.8 | 203673.3 |
| Պետական բյուջեից մուտքեր / Ուսման վարձ / | 84428.5 | 87198.4 |
| Գիտական թեմաների ֆինանսավորում պետական բյուջեից | 0.0 | 0.0 |
| Ստացված դրամաշնորհ պետական բյուջեից ,ոչ ֆորմալ կրթ.գործ .երիտասարդների համար դասընթացների կազմակերպումն ծրագրով | 3247.1 | 2431.9 |
| Կրթաթոշակի ստացում պետ.բյուջեից | 7429.5 | 4100.2 |
| Գործառնական գործունեությունից այլ մուտքեր | 5634.7 | 8866.8 |
| Օտարերկրյա դրամաշնորհների շրջանակներում մուտքեր | 41134.5 | 13339.2 |
| Ծառայությունների և ապրանքների ձեռք բերման դիմաց վճարումներ | (37156.2) | (34993.1) |
| Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից | (232630.2 ) | (245764.1) |
| Կրթաթոշակի վճարում | (7429.5) | (4338.3) |
| Ֆինանսական աջակցության տրամադրում | (699.5) | (596.2) |
| Հարկեր,պարտադիր վճարներ /հոդված 4823/ | (7545.2) | (17361.7) |
| **Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր** | **61350.5** | **16556.4** |
| *Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների մուտքեր* | | |
| *Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների ելքեր* | (27226.3) | (20169.8) |
| **Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր** | **(27226.3)** | **(20169.8)** |
| *Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր* | | |
| **Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցերի զուտ հոսքեր** | | |
| **Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ հոսք** | **34124.2** | **(3613.4)** |
| Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ | 849.0 | (240.1) |
| **Ժամանակաշրջանի սկզբի դրությամբ դրամական միջոցներ և դրանց համարժեքներ** | 77549.5 | 81403.0 |
| **Ժամանակաշրջանի վերջի դրությամբ դրամական միջոցներ և դրանց համարժեքներ** | 112522 | 77549.5 |

Ռեկտոր

Գլխավոր հաշվապահ

# Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

## 1. Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

Գորիսի պետական համալսարան» ՊՈԱԿ-ը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող,իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող պետական ոչ առևտրային կազմակերպություն է,որը ՀՀ օրենսդրությանը համապատասխան ձեռ ք է բերում և իրականացնում է իր կանոնադրությամբ ամրագրված խնդիրների կատարման համար անհրաժեշտ իրավունքներ ու պարտականություններ : Կազմակերպության գործունեությունը նպատակաուղղված է բնագիտական, սոցիալ-տնտեսագիտական, ճարտարագիտական, հասարակագիտական կրթության, հիմնարար ու կիրառական գիտական հետազոտությունների և ուսումնառության կազմակերպմանը՝ հանրակրթական, միջին մասնագիտական, բարձրագույն մասնագիտական, հետբուհական մասնագիտական կրթության մակարդակներում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված կարգով և կրթական ծրագրերով:
Կազմակերպության հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության:

ԳՊՀ-ն իրավունք ունի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնելու ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

1) բարձրագույն մասնագիտական, հետբուհական մասնագիտական, միջին մասնագիտական, միջնակարգ լրիվ (ընդհանուր) կրթության (ավագ դպրոց) կազմակերպում.

2) գիտամանկավարժական կադրերի պատրաստում, վերապատրաստում, որակավորման բարձրացում.

3) հրատարակչական, տպագրական գործունեության ծավալում և դրա արդյունքների իրացում.

4) ԳՊՀ-ի աշխատողների և սովորողների հանրային սննդի, հանգստի, բուժման, հանրակացարանաբնակ ուսանողների կենցաղի կազմակերպում և սպասարկում:

ԳՊՀ-ի կառավարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և սույն կանոնադրությանը համապատասխան՝ ինքնակառավարման հիման վրա՝ միանձնյա ղեկավարման և կոլեգիալության սկզբունքների զուգակցմամբ, հիմնադրի, լիազոր մարմնի, ԳՊՀ-ի խորհրդի, ԳՊՀ-ի գիտական խորհրդի և ռեկտորի գործառույթների իրականացմամբ:

## 2. Պատրաստման հիմունքներ

### 2.1. Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) պահանջների համաձայն, ինչպես հրապարակվել է հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ ) կողմից :
Ներկայումս ՖՀՄՍ չեն պարունակում հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ հատուկ

ուղեցույցներ՝ շահույթ չհետապնդող կազմակերպությունների համար: Եթե ՖՀՄՍ չի տալիս ուղղություն շահույթ չհետապնդող ոլորտի կազմակերությունններին հատուկ գործարքների հաշվառման վերաբերյալ,ապա հաշվապահական հաշվառման քաղաքականությունը պետք է հիմնվի ՖՀՄՍ ընդհանուր սկզբունքների վրա՝համաձայն Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հիմքերի»:

2.2. Ճանաչման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով

2.3. Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության արժույթը ՀՀ դրամն է, որը Ընկերության ֆունկցիոնալ և ներկայացման արժույթն է: Ֆինանսական տեղեկատվությունը ցույց է տրվում հազար դրամներով՝ ստորակետից հետո մեկ նիշ :

2.4. Գնահատումների և դատողությունների օգտագործում

ՖՀՄՍ-ին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է,որպեսզի կազմակերպության ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Չնայած ենթադրությունները և դատողությունները շարունակամար գնահատվում են և հիմնված են ղեկավարության կողմից ներկա ցուցանիշների վերաբերյալ տեղեկացված լինելու վրա, այդ հաշվապահական գնահատականները, որպես կանոն, տարբերվում են իրական արդյունքներից:

**3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն**

3.1 Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Կազմակերպության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքը: Իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով սահմանված ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքով: Ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում: Ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում: Ստորև ներկայացված են ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված փոխարժեքները.

| Արժույթ | 2023թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2022 դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|

ԵՎՐՈ 447.9 420.06

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում:

### 3.2 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները՝ հողատարածքը, շենքերը, շինությունները, կառուցվածքները, մեքենաները և սարքավորումները, տրանսպորտային միջոցները և արտադրական տնտեսական գույքը, որոնք օգտագործվում են ծառայությունների մատուցման կամ վարչական նպատակով, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում: Մաշվածությունը ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար:

Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև՝

Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

| *Դասի անվանում* | *Օգտակար ծառայությունը (տարի)* |
|---|---|
| Շենքեր, շինություններ | 60-120 |
| Գիրք, գրականություն | 5-20 |
| Մեքենաներ և սարքավորումներ | 8-12 |
| Արտադրատնտեսական գույք | 8-10 |
| Տրանսպորտային միջոցներ | 10 |
| Համակարգչային տեխնիկա | 5-8 |
| Այլ հիմնական միջոցներ | 5-8 |

### 3.3 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել կազմակերպության կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում,որը կազմում է 10 տարի:

### 3.4. Պաշարներ

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող

գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է՝ օգտագործելով առաջին մուտք՝ առաջին ելք (ԱՄԱԵ), և ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

3.5 **Ստացված շնորհներ**

Շնորհը չի ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավորված երաշխիք, որ Կազմակերպությունը շնորհը ստանալու է: Կազմակերպությունը ստանում է ակտիվներին վերաբերող և եկամուտներին վերաբերող շնորհներ:Շնորհները, որոնց հիմնական պայմանը Կազմակերպության կողմից ոչ ընթացիկ ակտիվներ գնելը, կառուցելը կամ այլ կերպ ձեռք բերելն է, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ և սիստեմատիկորեն փոխանցվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Այլ շնորհները ճանաչվում են սիստեմատիկ հիմունքով եկամուտ այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք փոխհատուցում են համապատասխան ծախսումները, որոնց համար դրանք ստացվել են: Շնորհը, որը հատկացվում է Կազմակերպությանը ՝ ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որպես շտապ ֆինանսական օգնություն՝ առանց հետագա համապատասխան ծախսումներ կրելու, ճանաչվում է որպես եկամուտ այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ դառնում է ստացման ենթակա:

3.6 **Պահուստներ**

Պահուստը ճանաչվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Կազմակերպությունը ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և եթե հավանական է, որ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե դրա ազդեցությունը զգալի է, ապա պահուստը որոշվում է ապագա դրամական արտահոսքերի զեղչման միջոցով՝ օգտագործելով մինչև հարկումը տոկոսադրույքը, որն արտացոլում է դրամի ժամանակային արժեքի վերաբերյալ շուկայի ընթացիկ գնահատումները և, կիրառելիության դեպքում, պարտավորությանը վերագրվող յուրահատուկ ռիսկերը:

## 4. Հիմնական միջոցներ

Հազար դրամ

| | Շենքեր, շինություններ, հողամասեր | Տրանսպորտային միջոցներ | Արտադրական, տնտեսական գույք | Մեքենաներ, սարքավորումներ | Այլ հիմնական միջոցներ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|
| **Սկզբն.արժեք 2022թ.հունվարի 1-ի դրութ.** | 191744.7 | 4110.0 | 14848.6 | 46917.3 | 49243.5 | 306864.1 |
| Ավելացում | 0 | 210 | 547.5 | 459.6 | 18190.9 | 19408.0 |
| Վերագնահատում | - | - | - | - | - | - |
| Օտարում | | | | | (30.0) | (30.0) |
| **2022թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ** | 191744.7 | 4320.0 | 15396.1 | 47376.9 | 67404.4 | 326242.1 |
| Ավելացում | 5040.2 | 0 | 3567.4 | 48.0 | 16289.4 | 24945.0 |
| Վերագնահատում | | | | | | |
| Օտարում | | | | | | |
| **2023թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ** | 196784.9 | 4320. | 18963.5 | 47424.9 | 83693.8 | 351187.1 |
| **Կուտակված մաշվ.և արժեզրկում 2022թ.հունվարի 1-ի դրութ.** | 8251.8 | 2411.1 | 7803.9 | 37110.8 | 39597.0 | 95174.6 |
| Հաշվետու տարվա մաշվ. ծախս | 4608.3 | 865.5 | 2217.5 | 3527.4 | 5967.2 | 17185.9 |
| Վերագնահատում | - | - | - | - | - | - |
| Օտարման հետևանքով դուրս գրում | | | | | (30.0) | (30.0) |
| **2022թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ** | 12860.1 | 3276.6 | 10021.4 | 40638.2 | 45534.2 | 112330.6 |
| Հաշվետու տարվա մաշվ. ծախս | 4609.6 | 1043.4 | 2285.8 | 3381.7 | 6413.2 | 17733.7 |
| Վերագնահատում | | | | | | |
| Օտարման հետևանքով դուրս գրում | | | | | | |
| **2023թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ** | 17469.7 | 4320.0 | 12307.2 | 44019.9 | 51947.4 | 130064.2 |
| **Հաշվեկշռային արժեք 2022թ.հունվարի 1-ի դրութ.** | 183492.9 | 1698.9 | 7044.7 | 9806.5 | 9646.5 | 211689.4 |
| **2022թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ** | 178884.6 | 1043.4 | 5374.7 | 6738.7 | 21870.2 | 213911.5 |
| **2023թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ** | 179315.2 | 0.0 | 6656.3 | 3405.0 | 31746.4 | 221122.8 |

Կազմակերպության հիմնական միջոցները գրավադրված չեն և հիմնական միջոցների վրա չկան սահմանափակումներ :Կազմակերպությունը չունի որևէ պարտավորության համար որպես ապահովություն գրավադրված հիմնական միջոցներ :

## 5. Ոչ նյութական ակտիվներ

| Հազար դրամ | Համակարգչային ծրագրեր | Լիցենզիաներ և վկայագրեր,արտոնագրեր | Այլ ոչ նյութական ակտիվներ | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| **Սկզբն.արժեք 2022թ.հունվարի 1-ի դրությամբ** | 2647.3 | 5147.1 | | 7794.4 |
| Ավելացում<br>Նվազում | | | | |
| **2022թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ** | 2647.3 | 5147.1 | | 7794.4 |
| Ավելացում<br>Նվազում | *110.0* | *0.0* | | *110.0* |
| **2023թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ** | 2757.3 | 5147.1 | | 7904.4 |
| Կուտակված ամորտիզացիա **2022թ.հունվարի 1-ի դրությամբ** | *702.8* | *1544.1* | | *2247.0* |
| Հաշվետու տարվա ամորտիզացիայի ծախս<br>Նվազում | 265.8 | 514.7 | | 780.5 |
| **2022թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ** | 968.6 | 2058.8 | | 3027.5 |
| Հաշվետու տարվա ամորտիզացիայի ծախս<br>Նվազում | 270.0 | 514.7 | | 784.6 |
| **2023թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ** | 1238.6 | 2573.5 | | 3812.0 |
| **Հաշվեկշռային արժեք 2022թ.հունվարի 1-ի դրութ.** | 1944.5 | 3603.0 | | 5547.4 |
| **2022թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ** | 1678.7 | 3088.3 | | 4766.9 |
| **2023թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ** | 1518.7 | 2573.6 | | 4092.3 |

## 6. Պաշարներ

| Հազար ՀՀ դրամ | 2023թ. | 2022թ. |
|---|---|---|
| Գրասենյակային, տնտեսական և այլ նյութեր | 2761.1 | 3695.5 |
| Բենզին | 339.0 | 716.2 |
| Շինանյութեր | 70.7 | 82.5 |
| Արագամաշ առարկաներ | 12209.1 | 13279.9 |
| Ընդամենը պաշարներ | 15379.9 | 17774.1 |

## 7. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

| Հազար ՀՀ դրամ | 2023թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2022թ . Դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| Առևտրային դեբիտորական պարտքեր | 101568.2 | 115822.5 |
| Անհուսալի դեբիտորական պարտքերի պահուստ | (40171.1) | 0.0 |
| Տրված կանխավճարներ | 10765.4 | 8637.5 |

| | | |
|---|---|---|
| Դեբիտորական պարտքեր բյուջեի գծով | 0.0 | 0.0 |
| Այլ դեբիտորական պարտքեր | 16.1 | 135.5 |
| **Ընդամենը** | **72178.6** | **124595.5** |

## 8. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

| Հազար դրամ | 2023թ Դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2022թ Դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| Բանկային հաշիվներ դրամային | 110795.0 | 76670.7 |
| Բանկային հաշիվներ արտարժույթային | 1727.7 | 878.8 |
| **Ընդամենը** | 112522.7 | 77549.5 |

## 9 Հետաձգված եկամուտներ/շնորհներից/

| Հազար ՀՀ դրամ | 2023թ | 2022թ |
|---|---|---|
| **Ոչ Ընթացիկ Հետաձգված եկամուտ ակտիվներին վերաբերող շնորհներից** | **46662.0** | **27662.5** |
| **Ընթացիկ Հետաձգված եկամուտ եկամուտներին վերաբերող շնորհներից** | **24365.8** | **23743.7** |
| **Ընդամենը** | **71027.8** | **51406.2** |

## 10. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

| Հազար ՀՀ դրամ | 2023թ. | 2022թ. |
|---|---|---|
| Առևտրային կրեդիտորական պարտքեր | 1559.4 | 1770.2 |
| Ստացված կանխավճարներ ուսման վարձերի գծով | 28697.8 | 25018.5 |
| Աշխատակիցների հատուցումներ | 3.0 | 134.9 |
| Վճարվելիք հարկեր և պարտավորություններ | 194.7 | 1.5 |
| Այլ | 0.0 | 0.0 |
| **Ընդամենը** | **30454.9** | **26925.0** |

## 11. Գործառնական եկամուտներ /611,614/

| Հազար դրամ | 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2022թ Դեկտեմբերի 31-ին ավարտված տարի. |
| --- | --- | --- |
| Ծառայությունների մատուցումից հասույթ ուսման վարձերի գծով | 272715.0 | 284279.2 |
| Ծառայությունների մատուցումից հասույթ տանիքին տեղակայվող անտենաների գծով | 958.8 | 958.8 |
| Ծառայությունների մատուցումից հասույթ վերապատրաստումների գծով | 6081.6 | 4016.5 |
| Ծառայությունների մատուցումից հասույթ այլ ծառ. Գծով | 94.0 | 394.2 |
| Գործառնական այլ եկամուտներ | 72.9 | 96.7 |
| Գիտահետազոտական ծառայությունների մատուցումից հասույթ | 0.0 | 0.0 |
| Ընդամենը | 279922.3 | 289745.4 |

Ռեկտոր

Գլխավոր հաշվապահ